ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 06

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորատի 22.11.2018թ. նիստի

Ռեկտորատի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին ռեկտորատի 15 (տասնհինգ) անդամից 12-ը (տասներկու):

Նիստին մասնակցում էին՝

1. Ե. Սերոբյան՝ ռեկտորի ԺՊ
2. Ս. Շահպարոնյան՝ ռեկտորի խորհրդական,
3. Կ. Պետրոսյան՝ ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար,
4. Վ. Խաչատրյան՝ արհեստակցական կազմակերպության նախագահ,
5. Ռ. Քալաջյան՝ ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ,
6. Թ. Խաչատրյան՝ գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն,
7. Ն. Ավետիսյան՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի փոխտնօրեն
8. Բ. Պողոսյան՝ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան
9. Թ. Մելիքյան՝ հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան,
10. Ռ. Մարդոյան՝ մանկավարժության ֆակուլտետի դեկան
11. Հովհաննիսյան Արտաշես՝ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ
12. Մկրտչյան Արթուր՝ ռազմական ամբիոնի պետ,

ՕՐԱԿԱՐԳ

1. 2018-ի Համահայկական հեռուստամարաթոնին համալսարանի մասնակցության մասին

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Ե. Սերոբյան

2. «Գյումրին առանց տնակների» հիմնադրամի ծրագրի իրագործման գործընթացում ՇՊՀ-ի մասնակցության մասին

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Ե. Սերոբյան

Ընթացիկ հարցեր

1. ԼՍԵՑԻՆ՝

2018-ի Համահայկական հեռուստամարաթոնին համալսարանի մասնակցության մասին

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ 2018թ.-ի համահայկական հեռուստամարաթոնին մասնակցելու համար բուհը հատկացնելու է որոշակի գումար և նշեց, քանի որ մեր բուհը տարիներ շարունակ պահպանել է այդ տրադիցիան, ռեկտորատի անդամներին խնդրեց առաջարկություններ անել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Թ. Մելիքյանը առաջարկեց համալսարանի կողմից մարաթոնի շրջանակներում հատկացնել 1000 000 մլն. ՀՀ դրամ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հանձնարարել ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ Ռ. Քալաջյանին 2018-ի Համահայկական հեռուստամարաթոնի հաշվի համարին ՇՊՀ-ի կողմից ապահովել 1մլն (մեկ միլիոն) ՀՀ դրամի դրամական փոխանցում:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝ Կողմ՝12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝

«Գյումրին առանց տնակների» հիմնադրամի ծրագրի իրագործման գործընթացում ՇՊՀ-ի մասնակցության մասին

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ «Խորան Արդ» ինտելեկտուալ կենտրոն ՀԿ-ն և «Գյումրին առանց տնակների» հիմնադրամը նախաձեռնել են կազմակերպել «Ինչ, որտեղ, երբ» խաղի բարեգործական առաջնություն, որը տեղի կունենա 03.12.2018թ.-ին «Սև բերդ» ամրոցում: Ամբողջ հասույթը տրամադրվելու է «Գյումրին առանց տնակների» հիմնադրամին: Պարոն Սերոբյանը նշեց, որ մեր համալսարանին հրավերք է ուղարկվել մասնակցելու կազմակերպվող միջոցառմանը համալսարանի «ինտելեկտուալներ» -ի թիմով: Թիմի մուտքավճարը կազմում է 60.000 ՀՀ դրամ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Համալսարանի «ինտելեկտուալներ» -ի թիմով մասնակցել միջոցառմանը և հանձնարարել ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ Ռ. Քալաջյանին 60 000 ՀՀ դրամ դրամական փոխանցում կատարել «Գյումրին առանց տնակների»հիմնադրամի հաշվեհամարին:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝ Կողմ՝12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ընթացիկ հարցեր

Պարոն Սերոբյանը տեղեկացրեց, որ Գյումրու քննչական բաժինը համալսարանի տարբեր ստորաբաժանումներից փաստաթղթեր է պահանջվելու առաջիկա օրերին, դեկաններին և համապատասխան կենտրոնների տնօրեններին հորդորեց աջակցել պահանջվելիք փաստաթղթերի տրամադրման հարցում:

Ռեկտորատի նախագահ՝ ռեկտորի ԺՊ	Ե. Սերոբյան
Ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար՝	Կ.Պետրոսյան
Ռեկտորի խորհրդական՝	Ս. Շահպարոնյան
Ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվ. բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ՝	Ռ. Քալաջյան
Արհեստակցական կազմակերպության նախագահ՝	Վ. Խաչատրյան
Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն՝	Ա. Սարգսյան
Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն՝	Հ. Մելքոնյան
Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն՝	Թ. Խաչատրյան

Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի փոխտնօրեն	Ն. Ավետիսյան
Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան՝	Բ. Պողոսյան
Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան՝	Թ. Մելիքյան
Մանկավարժության ֆակուլտետի դեկան՝	Ռ. Մարդոյան
Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան՝	Օ. Հովհաննիսյան
Ռազմական ամբիոնի պետ՝	Ա. Մկրտչյան
Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի վարիչ՝	Ա. Հովհաննիսյան